4) իրականացնում է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության արդյունավետ քննությանն ուղղված այլ գործողություններ:

(…):

*4. **Հայցային վաղեմություն կիրառելու միջնորդության և դրա դեմ բերված առարկությունները քննարկելուց հետո դատարանը գործի քննությունը հայտարարում է ավարտված և հրապարակում է դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը:***

(…):

*6. **Հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում դատարանը վճիռ է կայացնում հայցը մերժելու մասին՝ առանց անդրադառնալու գործի այլ փաստերի հաստատմանը և գնահատմանը:***

(…):

Տվյալ դեպքում հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը ներկայացվել է մինչև գործով ապացուցման պարտականությունը բաշխելու Դատարանի որոշում կայացնելը, Դատարանը իրականացրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168 հոդվածի 2-րդ մասով ամրագրված դատավարական գործողությունները:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը հանգում է ամփոփիչ եզրահանգման, որ հայցադիմումը Դատարան է ներկայացվել հայցային վաղեմության ժամկետը լրանալուց **տասնութ օր** հետո, ուստի այն ենթակա է մերժման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում դատարանը վճիռ է կայացնում հայցը մերժելու մասին՝ առանց անդրադառնալու գործի այլ փաստերի հաստատմանը և գնահատմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ հայցը մերժվում է հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով, Դատարանը գործի այլ փաստերի հաստատմանը և գնահատմանը չի անդրադառնում:

3. <u>Դատական ծախսերի վերաբերյալ Դատարանի իրավական վերլուծությունները.</u>

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածը, 109 հոդվածի 1-ին մասը, նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման և ներկայացված հայցադիմումի համար Հայցվորի կողմից վճարվել է օրենքով սահմանված չափին համապատասխան պետական տուրք, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168, 234.12 և 362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Ավետիս Խեցի>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի, երրորդ անձ <<Փայլք>> ՍՊԸ-ի՝ գնահատող հանձնաժողովի 22.08.2023 թվականի թիվ 3 արձանագրության 3.1 կետով (<<Ավետիս Խեցի>> ՍՊԸ-ի մասով) և 3.2 կետով (<<Ավետիս Խեցի>> ՍՊԸ-ի մասով) կայացրած որոշումները, նույն արձանագրության 3.3 կետով կայացված որոշումը, գնահատող հանձնաժողովի կողմից 22.08.2023 թվականին

https://gnumner.minfin.am/ կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը անվավեր ճանաչելու և որպես հետևանք 13.09.2023 թվականին ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի և <<Փայլք>> ՍՊԸ-ի միջև կնքված ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար Տաշիր համայնքի Ապավեն և Բլագոդարնոյե բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքների կատարման գնման թիվ ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/105 պայմանագիրը և գնահատող հանձնաժողովի կողմից 14.09.2023 թվականի https://gnumner.minfin.am/ կայքում հրապարակված կնքված պայմանագրի մասին հայտարարությունն անվավեր ճանաչելու, ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանին գնահատող հանձնաժողովի 10.08.2023 թվականի թիվ 2 արձանագրության 4.1 կետի 2-րդ պարբերության մեջ փոփոխություն կատարելը և <<Ավետիս Խեցի>> ՍՊԸ-ի հայտում արձանագրված անհամապատասխանությունները>> մանրամասն նկարագրելը պարտավորեցնելու պահանջների մասին հա. ԵԴ2/30756/02/23 քաղաքացիական գործով <<ԱՎԵՏԻՍ ԽԵՑԻ>> ՍՊԸ-ի ներկայացուցչի՝ հայցային վաղեմության ժամկետի բաց թողումը հարգելի համարելու և այն վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը մերժել:

2. <<Ավետիս Խեցի>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի, երրորդ անձ <<Փայլք>> ՍՊԸ-ի՝ գնահատող հանձնաժողովի 22.08.2023 թվականի թիվ 3 արձանագրության 3.1 կետով (<<Ավետիս Խեցի>> ՍՊԸ-ի մասով) և 3.2 կետով (<<Ավետիս Խեցի>> ՍՊԸ-ի մասով) կայացրած որոշումները, նույն արձանագրության 3.3 կետով կայացված որոշումը, գնահատող հանձնաժողովի կողմից 22.08.2023 թվականին https://gnumner.minfin.am/ կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը անվավեր ճանաչելու և որպես հետևանք 13.09.2023 թվականին ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի և <<Փայլք>> ՍՊԸ-ի միջև կնքված ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար Տաշիր համայնքի Ապավեն և Բլագոդարնոյե բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքների կատարման գնման թիվ ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/105 պայմանագիրը և գնահատող հանձնաժողովի կողմից 14.09.2023 թվականի https://gnumner.minfin.am/ կայքում հրապարակված կնքված պայմանագրի մասին հայտարարությունն անվավեր ճանաչելու, ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանին գնահատող հանձնաժողովի 10.08.2023 թվականի թիվ 2 արձանագրության 4.1 կետի 2-րդ պարբերության մեջ փոփոխություն կատարելը և <<Ավետիս Խեցի>> ՍՊԸ-ի հայտում արձանագրված անհամապատասխանությունները>> մանրամասն նկարագրելը պարտավորեցնելու պահանջների մասին հայցը՝ հայցային վաղեմություն կիրառելու հիմքով մերժել:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5. Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՕՀԱՆՅԱՆ**